

2648

Eros

402

4.092  
F-75



1032  
371  
ՔՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

ՆՈՒՊԱՐԵԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

ՎԻԿԱՏՈՐ ՀԻՒԿՈՅԻ ՆՅՐԻ—ՏԱՅԻՆ

(Տպագրութիւն Տէտէեան, Զմբւռնիս . յերիս հատորս. Ա. և Բ. հատորք,  
1871. Գ. հատոր, 1872. տէր և հրատարակիչ Տիգրան Յարութիւն  
Տէտէեան. նախնական զին հօ դահեկան. այժմու զին  
33 դահեկան) :

Գ. Բ. Ց

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻՒԶԱՆԴԱՅԻ

զին 100 փարա արծաթ

معارف عموميہ نظارت جلیلہ سنگ رخصتیہ  
۱۵ شوال ۳۰۱ و ۲۶ تموز ۳۰۰ نومرو ۳۶۵

Printed In Turkey

ԿՈՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1884

2003

84,092  
Բ-75

# ՔՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

## ՆՈՒՊԱՐԵԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

ՎԻԿՏՈՐ ՀԻՒԿՈՅԻ ՆՈՐ—Ճամփակ

(Տպագրութիւն Տէտէեան, Զմբռնիա . յերիս հատորս . Ա. և Բ. հատորք,  
1871. Գ. հատոր, 1872. աէր և հրատարակիչ Տիգրան Յարութիւն  
Տէտէեան . նախնական դին 45 դահեկան . այժմաւ դին  
35 դահեկան) :

### ԳՐԵՑ

ՆՈՐԱՅԻ Ն. ԲԻՒԶԱՆԴԱՑԻ

Գին 100 փարա արծավալ

معارف عمومیہ نظارت جلیلہ سنک رخصتیہ  
شوال ۳۰۱ و ۲۶۰ توز ۳۰۰ نومرو ۳۶۵

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈՂԻՍ

Կ ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1884

2011

795-62

# ՔՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ



Գաղղիական արդի դրականոթեան մէջ չկայ մատենազիր այնչափ գժուարահասկանալի որչափ վիկտոր Հիւկոյ, չկայ մատենադրութիւն այնքան գժուարաթարդ մանելի որքան Բարեկա Առաքածանի Եկեղէն (Notre-Dame de Paris): Կարծեմ Բագրատոնի Հ. Արտէն անգամ, որ այնպիսի ճարտարութեամբ և յաջողութեամբ ի հայ փոխած է զէռմեր, զվերգիլ, զՄոփոկլէս, զԴիմոսթենէս, զՄիլտոն, զՌամին, զՊափիւէ, զՄատիեռն, զՎորդէր, զԱլփիերի և զՓոսկոլյց, չեր համարձակեր զՆօր-Տարգմանել ձեռնարկելու, (կ'ենթագրուի յետ հրամանի հոգեոր իշխանութեան): Մեծանուն հայկաբանին միշտակին նախատինք չէ ըսելո թէ դասական հեղինակաց գործերէն անհամեմատ գժուար է վիպական գպրոցին պարագլուխ վիկտոր Հիւկոյի հրաշակելուն:

Այս վիպասանութիւնս արժանաւոր կերպով թարգմանելու համար պէտք է խոր հմտութիւն վիրգիլիոսի լատիներէնին, Միջին դարու աղաւաղ լատիներէնին, իտալերէնի, սպաներէնի, հին գաղղիերէնի, գողերէնի (argot), նախնի սովորութից, ընդհանուր պատմութեան, քիմիագործութեան.— պէտք է մասնաւոր վարժութիւն և տեղեկութիւն գաղղիերէն լեզուի մանրամանը նրբութեանց, բառերու բաղմապատիկ նշանակութեանց, ընտանեկան ասացուածոց թաքուն իմաստից, և մանաւանդ վիկտոր Հիւկոյի սեպհական ոճոյն.— պէտք է գաղղիացի հոյակապ բանաստեղծին հետ վարազաթեերով բարձրաթռիչ ճախրել երևակացութեան անսահման տարածութեան մէջ, ելնել և իջնել, խոյանալ, սլանալ, միշտ հզօր, միշտ կորպի, միշտ վսեմ:

Տ. Մեռոպ Նուպարեան, Ֆրանսերէն-Հայ աշխարհիկ Բառարանին առաջանձն հեղինակն, թարգմանած է զՆօր-



1389  
39 Q

1389

8. “Հանդարտ խիզճով”։ Դժուարութեան բառն չի գանուիր Տ. Նուպարեանի բառարանին մէջ։ ամենայն ինչ դիրին է իրեն համար։ Վորդէր ըստ է թէ “Ռասինի ողբերգութեանց ամէն երեսին ներքե գրելու է։ Գեղեցի, Արտուր, Ներդաշնի, վաւու”։ Ընդհակառակն ես կ’ըսեմ թէ Տ. Նուպարեանի թարգմանութեան 640 երեսներէն ամէն մէկուն ստորև պէտք է գրել Տէւ, Անորուեա, Աներական, Խորի, Օրորորի, Գուեհի, Սիալ, շատ անդամ երկուքը երեքը, երեմն եօթնը միանդամայն։ Կենացս մէջ այսպիսի գործ մը երբեք կարդացած չէի։ արմացայ, ընդարձացայ, ապշեցայ։ Ով որ տեսած չէ Նուպարեան Նօր-Տաճը՝ ոչ ինչ տեսած է։ Չեմ ցաւիր ոչ իմ ՅՅ դահեկանիս կորսաեան և ոչ ժամանակիս վատնութեան։ (ամիս ու կէս աւեց իմ ընթերցում հանդերձ բաղդատութեամբ բնագրին)։ մեծ օդուա քաղեցի սոյն աշխատութենէս, վասն զի մի անդամ ևս համոզուեցայ թէ ո’ըշափ դժուարին է թարգմանութեան արուեստն։ Յուսամ ներկայ Քննադատութիւնս օդակար ըլլայ նաև Հասարկութեան, որ յաճախ կը կարծէ թէ զիտութիւնն և հմտութիւնն անոնց քով է որ մեծ կը ջարդեն և արհամարհանօք կը խօսին ուրիշ վաստակաւորաց վրայ։ Նօր-Տաճը թարգմանիչն, (այս անուանակոչութիւնս պիտի անմահացնէ զջ։ Մեսրոպ Նուպարեան), ուղեց բարձրացնել իւր Բառարանը՝ իրեւ պատուանդան գործածելով իմ Բառադիրքս։ բայց չմտածեց թէ ես հաճ և հաւա՞ն էի այդ ստորին ծառայութեան։

Անբաւ բան կայ ըսելիք Նօր-Տաճի թարգմանութեան վրայ։ Մանրամասնութեանց մտնելու ոչ կամք ունիմ ոչ ժամանակ։ իմ տեսութեանցս ուղղեծուծը միայն պիտի ներկայացնեմ։ ձեռվ ծանօթութեանց։ Ուշիմ ընթերցողն քիչն շատը կրնայ հասկընալ։

Երեք գլխաւոր կէտերու կը բաժնեմ իմ Քննադատութեանս նիւթը։ Ա. Տ. Մեսրոպ Նուպարեանի ընդհանուր անհմտութիւնն։ — Բ. Գաղղիերէն լեզուի անտեղեկութիւնն։ — Գ. Հայերէն լեզուի անդիտութիւնն։

Ա. Համարուառ անհոգնելին։ — 4. Ա. հատորոյն 14 Երեսը վ. Հիւկոյ կը մէջ Բառիկ բանաստեղծին քառեակ տողերը

Տ. Նուպարեանի դրած ծանօթութենէն այնպէս իմն կը կարծուի թէ այդ Թէոփիլ է մեր ժամանակակից Թէոփիլ Կողիէ մատենագիրն, հեղինակ Օւերտ ու Մաքնէ (Madeleine de Maupin), մինչդեռ Հիւկոյի յիշած բանաստեղծն է Թէոփիլ առ Վիա (Théophile de Viau), որ շատ անգամ լոկ Թէոփիլ կը կոչուի, (plus connu sous le nom de Théophile, կը ծանուցանեն կենապրական բառարանք)։ Թէոփիլ առ Վիա ծնած է 1590ին և մեռած 1626ին։ իսկ Թէոփիլ Կողիէ ծնած է 1811ին և մեռած 1872ին։ Կողիէ անուան ներկայութիւնն եթէ ուրիշ կերպով մեկնէ ինձ Տ. Նուպարեան, մեծապէս կը հաճէ զիս։

2. “Երբ Շարլ Եօթներորդ Սիլերիէ մինչև Մուիզօն՝ մեր Վէզլի գետէն վար իջաւ, և Բիւսէլ գշխոյն իր նաւին մէջ ունենարով”։ Բ. Երես 31։ Հիւկոյ կ’ըսէ “madame la Pucelle”, և կ’ակնարկէ զբաղմաննա Արկեան կամ Դարշական (Jeanne d’Arc կամ Darc), որ կը կոչուի նաև “կոյսն Օրլէանի” (la Pucelle d’Orléans)։ Յովհաննա Դարկեան ունչը չէր, այլ գէւազ ու քի։ Madame la Pucelle թարգմանելի էր “տիկին կոյսն”, ինչպէս նախնիք ըստ են “տիկին թեկլ, տիկին Հռիփամէ, տիկին օրիորդ Սաթինիկ”։

3. “Արնամ Հայր Արք, Հայուանը խոսուածնէր ամբողջ խօսիլ”։ Բ. Երես 96։ Բնագիրն։ “Je pourrais dire le Pater, et l’Ave Maria”. (Արնամ ըսել Հայր Արք, և Ուզո՞ն Քէւ, Մարտիրոս)։ Հայուանը խոսուածնէր (և ոչ խոսուածնէր) Հայաստանեաց Եկեղեցւոյ սեպհական ազօթք մ’է, զոր յօրինած է սուրբն Ներսէ Շնորհալի յ’ժի գարուն։ Հուովմայեցւոց Եկեղեցւոյն ազօթագրոց մէջ չի գտնուիր Հայուանը խոսուածնէր։

4. “Կիւրոս խաղին մէջ՝ Արէնէրէ և կէնդանէ Բարոյէկան անուններով երեցող՝ հոչակաւոր ծերունի ափիկին Բիկու տեսած է զայն”։ Գ. Երես 104։ Բնագիրն։ “où il a été vu par la vieille madame Pilou, célèbre dans le Cyrus sous le nom d’Aricidie et de la Morale vivante.” Հիւկոյի յիշած Կիւրոսն անշուշտ Մաղդաղինէ Սգիւտէրի (Madeleine de Scudéri) օրիորդին վարառանուիւնն է (և ոչ թէ իու)։

5. “Չեր բարձրապատուութիւնը, պատասխանեց արքան, ի նանիք քաղաքավարութիւններ կ’ընէ այս Փլաման

խողերուն . Մարգարիտաս առաջ խոզն . Margaritas ante porcos.— Աւելի լաւ է ըստու , պատասխանեց կարտինալը ժայիտով մը , խոչ առաջ հարդարուա . Porcos ante Margaritam” . Ա. Երես 30 : Տ. Նուպարեան հաւասարապէս քաջ է ամենայն լեզուաց մէջ . Margaritas ante porcos կը թարդմանուի ջայրական առաջ առաջ խոզն . իսկ Porcos ante Margaritam , ջայրական առաջ Մարգարիտ , և ոչ թէ խոչ առաջ հարդարուա . Հիւկոյի բառախան սպաննուած է ի նուպարեան թարդմանու մեան . թէ ով էր Մարգարիտ , տես նոյն հատորոյն 9 Երեսը . իսկ խողերն են փլանդրացի (flamand) դեսպանք :

6. “Ո՞յ , այ , Քլոտիուս ընդ Քլոտի : Eia! eia! Claudio cum clando” . Ա. Երես 175 : Ո՞յ , այ , տէր Նուպար , խընոյէ՛ կիկերոնի լեզուին . ի՞նչ է այդ երկրորդ Քլոտի . լատիներէն claudus “կազ” կը նշանակէ , բարեկամ’ , և սամ clando “ընդ կազի” : Հեղինակն կ’ըսէ . “Ե՛նա , Ե՛նա , կզօդիոս ընդ կազի” . կզօդիոս է նոյն ինքն ֆրուլյո (և ոչ թէ չուովմայեցի կայորն կղօդիոս , ինչպէս կը կարծէ Տ. Նուպարեան) , իսկ կազն է Քաղիմոդոյ : Տես յ’գ հատոր , Երես 20 , ուր Քաղիմոդոյ կը կոչուի “Սապատողն , միականի , կաղ” , bossu , borgne , boiteux .

Քաղղիացի կոմնն Պուէսան (1705-1783) որ թարդմանած է Արիոսայի Ուլունդ ալեգրի (Orlando furioso) բանաստեղծութիւնը , բնադրին սապուերձ կամ դնիստ հրուանդան) բառերը յատուկ անուն կարծելով “Գարոյ-Պասոյի հրուանդան” , գրած է իւր թարդմանութեան մէջ , և “Գարոյ-Պասոյի կոմն” անունը ժառանդած է :

7. “Երջանիկ ալեոյթ . Forfunate senex” : Գ. Երես 15 : Լատիներէն senex ձերանէ , ալուր կը նշանակէ , և ոչ թէ ալուրանէ : Այս Երկու բառերս վիրդիկի Առաջին Հովուերդութենէն առնուած են , տող Յ՛ն , զոր Գեր . Եղուարդ Հիւրմիւզեան թարդմանած է . “Ծերունի՛դ բարեբաստիկ” :

Ալուր և Ալուրան միանդամայն կը յիշուին Առաքեսն բառադրոց երկրորդ տպագրութեան մէջ : Ալուր սիսալ ընթերցուած կը թուի , վասն զի Հայկաղեանի յիշած օրինակին մէջ սոյն բառս Ալուրան ուղղեալ է յՈսկերերանի մեկնութեանն Երբայեցւոց թղթոյն , Հ. Բ. Երես 493 : Ալու-

րոյն կը գրուի նաև ի վարս Հարանց , Հ. Ա. Երես 58 : Եթէ ուղիղ է Ալուրան , պիտի ըսուի նաև Ալուրան փոխանակ Ալուրանք , Ալուր փոխանակ Ալուրան , Ալուրան փոխանակ Ալուրան :

8. Աղուհացից չորրորդ կիւրակէն ըստ Լատինացւոց կը կոչուի Lætare , որ նոյն առուր ժամամտին (introit) առաջն բառն է , և կը նշանակէ Խնդա՛ , ջնծա՛ , հրամայական Լætari բարին : Տ. Նուպարեան կը թարդմանէ “Ճնծութեան կիւրակէ” , Ա. Երես 143 , և չդիսեր որ աղուհացից չորրորդ կիւրակէն ըստ Լատինացւոց՝ է ըստ Հայոց հինգերորդ կիւրակէն , զոր մենք կ’անուանենք “կիւրակէ Դատաւորին” : Ի՞նչ կը հասկընայ Քաղղիացին եթէ հայերէն նոր կիւրակէ ըսուածը թարդմանուի Le nouveau dimanche de la Quasimodo .

9. “Զամենայն յօս ի բաց մերկացիր . Lasciate ogni speranza” . Բ. Երես 177 : Խտալական մատենագրութեան և լեզուին հմուտ թարդմանիչ մը ըսելու էր . “Ծնկեցէք զամենայն յօս” : Այս Երեք բառերն Տանդէի գժոխոց արձանագրին մէկ մասն են . Lasciate ogni speranza voi che’ ntrate . Ըսէցէ՛ լամենայն յօս որ հըրանէ՛ , ըստ թարդմանութեան չ . Արսենի Բագրատունուց : Տանդէ իւր Ալուրանքայն իսպանական (la Divina Commedia) մէջ եղակի բայ և գերանուն կը գործածէ Երբ խօսքն մէկ անձի կ’ուզդէ , յոգնակի Երբ կ’ուղղէ բազմաց . հոս Lasciate յոդնակի է և “ի բաց մերկացիր” չթարդմանուիր :

10. “Hombre, quita tu sombrero ? Մարդ , հոս պիտի միսճիս դու” . Ա. Երես 107 : Այս սպանիական քառեակ բառերն կը նշանակեն . “Մարդ , գլխարկդ չհանե՞ս” : Յայտնի է արդէն Հիւկոյի հետևեալ խօսքերէն . “et avant qu’il eût compris ce que cela voulait dire, l’autre lui avait pris son chapeau” . տես Sombrero նաև ի Լիդրէի բառարան :

Կը պատմեն թէ կուէսէ գաղղիացի բանաստեղծն (հեղինակ վէր-վէրի) ընկերութեան մը մէջ հետևեալ հանելուկը կ’առաջարկէ .

Je suis un ornement qu'on porte sur la tête;  
Je m'appelle chapeau : devine, grosse bête.

Ներկայ գտնուող անձինք իրենց ծիծաղներով կը յայտնեն թէ հասկըցած էին ժեռու ըլլալը . մէջերնէն մէկը միայն լու մը մտածելէն ետքը՝ կը դոչէ յանկարծ . “Դուայ, դրայ, Պ. կուէսէ . կեղծամ ըսել կ'ուզե՞ս” : Գոնէ կեղծամն գլխարկի պէս զլսու զարդ մ'է . բայց Տ. Նուպարեան իւր անհուն զիտութեամբն կ'ուզէ ապշեցնել Նօր-Տաճի ընթերցողները . և զուր է չիւկոյի շապեա մեկնաբանութիւնն . Տ. Նուպարեանի համար սպաներէն sombrero բառն գաղղիերէն sombrer բայն է և հրճէւ, ընկած կը նշանակէ : Անունը տամ չիմանաս, տէր Նուպար :

Բնթերցողն Տ. Նուպարեանի լատիներէն, իտալերէն և լուսպաներէն լեզուաց անհմտութիւնը տեսնելէն ետքը, լսէ այժմ թէ ի՞նչ փառաւոր վկայութիւն կու տայ վասն անձին Նօր-Տաճի թարգմանիչն . “Զլլցանք զանց ընել և առանց թարգմանելու անցնիլ լատիներէն, սպանեօլերէն, իտալերէն, հին գաղղիարէն, արկօդերէն, և այլն շատ մը պարբերութիւններ, հատուածներ ու բառեր, որք Նօդր-Տամի գժուարիմանալի բնագրին մէջ ափիւու կը գտնուին, զայն առաւել գժուարիմանալի ընծայելով, և զորս լուծելու համար ոչ տարբեր տարբեր հառար անցւու դիմերէ կասեցանք, և ոչ ալ մեր կողմէ աշխատալի մանր խուզարկութիւններէ, որպէս զի աճուրդ և հարազար թարգմանութիւն մ'ընծայելու կարող ըլլանք ազգայնոց” : Ապրիս, տէր Նուպար . բիւր գոհութիւն ի կողմանէ համայն Ծնթերցողացդ : Յայ կ'ընէմ, մանաւանդ թէ բոլոր սրտովս կը մաղթեմ որ չիւկոյ ոսկի շքադրամով վարձաարէ քու “աշխատալի մանր խուզարկութիւններդ” :

Ֆրանսերէն-Հայ աշխարհիկ բառարանիդ . Յայտարարութեան հետեւեալ խօսքերն ևս կ'ընդօրինակեմ հոս . Երանի՛ բաժանորդացդ . Ալերջապէս բառարանիս ետևի կողմը՝ այլադոյն թերթով նոր բառարան մ'ալ յարեցինք լուրի և առէւ լուրանէրէ առնուած ոճերու և ասմունքներու յատկացած, որք իրենց յոլովակի կիրառութեամբ գրեթէ առօրեայ պիտանութիւն ունին : Այս յաւելումիս կարեւորութիւնն ևս անշուշտ պիտի ճանչնան ու գնահատեն ազգայնք” : Հապա՛ . ի՞նչ ըսել է :

Տ. Նուպարեան ամենադիւրին կերպ մը դտած է թարգմանութեան : Հիւկոյ Նօր-Տաճի մէջ բաղում անծանօթ կամ սակաւածանօթ բառեր կը դործածէ, օրինակ իմն Աdrézarch, Hubin, Marcandier, Boutanche, Merelle, Brigandine. Ի՞նչ կը նշանակեն այս բառերս . “զի՞ Փոյթ է ինձ”, կ'ըսէ Տ. Նուպարեան, և հայերէն նշանագրերով կը դրոշմէ Ամրեզարաք (Ա. 127. գ. 205), Հիւպէն (Ա. 83, 105), Մարքանտիէ (Ա. 83, 112. գ. 73), Պուդանչ (Ա. 83), Մըրէլ (Ա. 173. գ. 69), Պրիկանտին (Բ. 148) . Ժող լընթերցողն ի՞նչ կ'ուզէ հասկընայ : Երրորդ գրոց երկրորդ գլուխն (Paris à vol d'oiseau) թարգմանել քու կարողութենէդ վեր է . ցատքէ՛, բարեկամ . ամենուն տրուած չէ հեծանել ի Պիդասոս . կրծատէ յապաւէ Հիւկոյի վիպասանութեան այն սքանչելի հատուածն որ է Զանդակներու զարթման (Réveil des cloches) նկարագիրն : Ի՞նչ հարկ Dilemme, Baleine, Grenadier, Mosaïque, Mistigri, Saumon բառերուն հայերէնն հետազոտել կամ ստեղծանել . Դիբ Տիղեմայ (Ա. 97), Պալէնա (Ա. 189), Կրբնատիէ (Բ. 26), Սոլայիք (Գ. 22), Միսդիկրի (Գ. 70), Սոմօն ձուկ (Գ. 133) : Trinquer հայ լեզուի մէջ համանշանակ չունի, դիբ ուրեմն Տրնկել (Ա. 106) : Ինչո՞ւ “պահպանողական ամուլ դրութեան հետևելով” հայերէն բարբառը չգարգայնենք . ինչո՞ւ նախնեաց օրինաւոր ըլլայ յունաբէնէ, պարսկերէնէ, ասորերէնէ բառեր և ոճեր գողնալ, և մեզի զլացուի գաղզիերէն սիրուն և կոկիկ բառերով ու ոճերով հայերէն լեզուին “արդուզարդը” աւելի ևս շքեզացնելու պարծանքը : Միթէ ժի և ժի դարուց մատենագիրք հայ չէին երբ կը գրէին Տըֆնաել (Défendre), կալօփեցնել (Galoper), Տամոնցէլ (Damoiselle), Բրաջուր (Prêcheur), Արծուէս կամ Արծուէսք (Archevesque), Քիթ (Quitte) . Հապա, յառաջմատիք Բարլամէնթ, Պիւտճէ, Քօմիսիօն, Մաքսիմօմ, Սիսդեմողիք, Պիեսսա, ինտելլիկենցա . . .

Վերոյիշեալ բառերէն՝ միայն աճէզարաք կ'ուզեմ քըննել : Ինձի համար չիք տարակոյս որ այդ բառին ուղղագոյն ձեն է ազէդարա, տեսակ մը ծառ Պարսկաստանի, որոյ պառզին թունաւոր է . ալլարտիքին պարսիկ բառն եղած է գաղղիերէն ազէդարա . Պոխանակ Ամրեզարաք զրելու ես

լնտրելադոյն կը համարիմ մեր հին բժշկապետաց հետ  
դրել Աղասդրախտ . սակայն այս ալ իրաւ է որ ծթռած  
միջնդարեան մի եմ ես , թշնամի հայերէն լեզուին բար-  
գաւաճման , և ոչ ուրիշ բանի արժանաւոր՝ բայց եթէ  
խելօք Խիւրէ համեղ զուարձաբանութեանց :

Բ. Գարդեւեն վեստ անուելեւունեւն .

ա. Գաղղիերէնի վրիպակք .

բ. Գաղղիերէն բառերու այլ ընդ այլոյ խմացուածք .

գ. Գաղղիերէն բառերու չհամապատասխանող հայե-  
րէն բառք .

դ. Ահազին անմոտադրութիւնք .

ե. Յատուկ անուանց սխալ կարդացմունք .

Ա. Գարդեւենէ Կիւրէն . — 1. “Ամենահեղ տէր՝ պարոն թա-  
գաւոր”. Ա. Երես 9 :

Բնադիրն . Très redouté seigneur monsieur le roi . — Զը-  
դիսեմ թէ ուշադանական կը նշաց անուանէլ կը նայ  
թարդմանուիլ :

2. “Դիմաւոր և մանրակրկիտ առեղծուածային պայքար-  
ներ”. Ա. Երես 23 : Բնադիրն . Disputations cardinales et  
quodlibétaires . — Ըստ Տ. Նուպարեանի Quolibet (Անհամ  
կատակրանութիւն) կը նշանակէ Առեղծուած , և Quod-  
libétaire Առեղծուածային : Բայց ըստ Լիդրէի Question  
quodlibétaire կը նշանակէ question libre, c'est-à-dire choisie  
et posée comme l'entend l'auteur de la thèse.

3. “Դպիրներու իրարու հետ ունեցած վէճերը , առբէւրու-  
նեները կարգադրելու համար”. Ա. Երես 84 , ծանօթու-  
թիւն : Գաղղիերէն ճիշճական չի թարդ-  
մանուիր հոս , այլ հայաւակունեւն :

4. “Հրէի դէմքով մօրուեղ փոքր կըր մը . . . ետին յաղթ  
շուն մը ձգած”. Ա. Երես 99 : Բնադիրն . Un petit aveugle  
à face juive et barbue , . . . remorqué par un gros chien . —  
Առաջնորդ շունն՝ կուրին առջևէն կ'երթայ , տէր Նուպար ,  
ինչպէս որ նաւածիդ շոգենաւն (remorqueur) նաւուն առ-  
ջևէն , եղներն՝ արօրին առջևէն , և ոչ թէ ետեէն :

5. “Քլօրէն թրուլը վու , թագաւոր թիւնի (թունուզ , հին  
ատենը թէն կամ թունեղիա)”. Ա. Երես 108 : Բնադրին  
roi de Thunes բաածն “թունուզի թագաւոր” չի նշանակեր ,  
այլ “Մուրացիկներու թագաւոր”. Հին գաղղիերէնի մէջ  
thune ըսել է Ողորմութիւն աղքատի (ասմոն). տես Tuner  
ի Լիդրէի բառարանն , և Thune ի Յատելուածին : “Բազում  
դպրութիւնք դքեզ ի մայորութիւն գարձուցանեն”, տէր  
Մերոսպ :

6. “Գինեշաղախ սրուններ”. Ա. Երես 110 : Բնադիրն .  
jambes avinées . գաղղիերէն Avoir les jambes avinées կը  
նշանակէ chanceler par suite d'ivresse , այսինքն գեղեց-  
առ արբեցութեան : Թարգմանելի էր Գեղեկոս սրունլ  
ներ : Հնձանահարին սրուններն կընան ըլլալ գինեշաղախ ,  
բայց ոչ սրունք արբեցոյն :

7. “Գունագեղ բարձր ապակիններ”. Ա. Երես 135 : Բնա-  
դիրն . vitraux hauts en couleur . այսինքն Պայծառերանգ  
կամ գուննեան (haut en couleur) ապակիններ : Տ. Նուպա-  
րեան կը կարծէ թէ հաջանան vitraux գոյականին  
կ'երթայ , և կը թարգմանէ “բարձր ապակիններ” :

8. “Պատարագէն վերջը մատաղատի մանուկ մը դրուած  
էր , անշնորհ ձեռքով մը գաւթին մէջ հաստատուած այն  
անկողնի փայտեայ կազմածին վրայ”. Ա. Երես 144 : Բնա-  
դիրն . Une créature vivante avait été déposée , après la  
messe , dans l'église de Notre-Dame , sur le bois scellé dans  
le parvis , à main gauche . այսինքն թէ Մանուկ մը դր-  
ռուած էր եկեղեցւոյն սրահին կամ գաւթին ձախակողմը  
(à main gauche) հաստատուած փայտեայ կազմածին վրայ :  
Տ. Նուպարեան ա մանակ բառերը անշնորհ յէւրուլ է  
հասկցած է :

9. “Այս ճիւաղը նազելի թէյմաէ ընծայ կու գայ նազելի  
Բարիղի”. Ա. Երես 145 : Բնադիրն . C'est monsieur de Reims  
qui envoie cette énormité à monsieur de Paris . այսինքն  
թէ “Աէնսի եպիսկոպոսն (monsieur de Reims) Բարիղի Ե-  
պիսկոպոսին (monsieur de Paris) ընծայ կը զրկէ զայս ճի-  
ւաղ” : Տես յայտնապէս Բ. հատորոյն 43-44 Երեսները :  
Նոյն սխալն է նաև Գ. հատորոյն 116 Երեսը , ուր մոնսieur

d'Angers "Պարոն տ'Անժեր" թարգմանուած է փոխանակ "Անժեի եպիսկոպոսն":

Այժմ Monsieur de Paris կը կոչուի թարիդ քաղաքի գահին (exécuteur):

10. "Ոյս պիտի սպաննէ զայս". Ա. Երես 489, 190: Բնագիրն. Ceci tuera cela, Ոյս պիտի սպաննէ զայն: "Թուրոս պիտի սպաննէ զիկրտկոս" կը նշանակէ ըստ Տ. Նու պարեանի "Թուրոս պիտի սպաննէ զթորոս":

11. "Տան առջև առջև իբիսան կախուած աղուոր օթոցներու յիշատակով՝ մասովի յափշտակուած մնարով". Բ. Երես 20: Որդի թարգմանիչը դրեթէ միշտ վեille բառն առջև իբիսան կը հասկընան, փոխանակ նախնանց օրը: La veille au soir է առջև իբիսան:

12. "Փոխատու-Ժանի և Տրավիզոնի կայսեր դեսպաններն, որոնք Միջազետքէն թարիդ եկան և որոնք ականջնին օղեր ունեին". Բ. Երես 29: Հիւկոյի Prete-Jean դրածը Տ. Նուպարեան կը ստուգարանէ ի Prêter (Փոխառալ) բայէն, և կը թարգմանէ Փոխատու-Ժան, մինչդեռ ըստ Լիդրէի թարգմանելի է Յոհան Երէց, Prêtre-Jean: Ահա Լիդրէի մեկնութիւնն. "Prêtre-Jean; personnage imaginaire que les Occidentaux, dans le XII<sup>e</sup> siècle, supposèrent être chrétien et régner dans la haute Asie. Au XV<sup>e</sup> siècle, on le transporta dans l'Abyssinie, qui en effet est chrétienne. Ce mot était souvent corrompu en Prête-jean". Տես նաև ի պատմական բառարանս:

13. "Ենին, այս ամիս՝ Սուրբ Պօղոսի տօնին՝ տասն և վեց տարի պիտի ըլլայ, Բաքէդ աղջիկ դաւակ մը ծնաւ". Բ. Երես 33: Բնագիրն կ'ըսէ ալուսածին կը խոյի Պաւլացի տօնին, և ոչ թէ սուրբ Պօղոսի: Լատինացիք զարբուհի Պաւլա կը տօնեն յունուարի 26ին, իսկ զՓօլոս Առաքեալ յունիսի 29ին: Կայ առ Լատինացիս նաև տօն դարձի Պօղոս Առաքելոյն (Conversion de saint Paul) ի 25 յունուարի, բայց Հիւկոյի սուրբ Պաւլա է. Երկրպայելու տեղի չկայ բնաւ:

14. "Մահիէդ այն արւակէւ, թարշամեալ, հերարձակ գլուխն աճուն անձկութեամբ մը կը դիտէր միշտ". Բ. Ե-

րես 47: Բնագիրն. cette tête hâve, flétrie, échevelée.—hâve կը նշանակէ պալ, maigre et défiguré. տասնուհինդ տարի ներքնատան (cave) մէջ փակուած անձի մը երեսն ի՞նչպէս արևէւ կրնայ ըլլալ, մանաւանդ երբ հեղինակն քանի մի առղ վերը կ'ըսէ թէ "Ներքնատան կամ գրին նշահանէն (soupirail) հիւսիսային հողմն ևեթ կը մտնէր և "Ն երբէւ արէտէւ" (jamais le soleil):

15. "Քիթդ համագամ կերակուրի մը դարձած է". Բ. Երես 133: Բնագիրն. vous avez le nez tourné à la friandise, πας ορ կը նշանակէ Հեշտասէր ես, Զգայասէր ես:

16. "Պատաւորներուն զլիսուն վրայովք՝ Քրիստոսի մեծ պատկեր մը տարտամ կերպով կ'որոշուէր". Բ. Երես 156: Բնագրին christ բառն Խաչելութիւն կը նշանակէ և ոչ թէ Քրիստոսի պատկեր:

17. "Դուռը նորէն ինքինքին (Էրու ինք իր) վրայ փակեցաւ". Բ. Երես 166: Բնագիրն. La porte se referma sur elle. Հատուածիս մէջ ալ յարաբերեր զporte, այլ զեսմերալդա: Թարգմանելի էր. "Դուռն վերսախն վաւկեցաւ աղջկան վրայ":

18. "Մի և նյոն մանրաթեն է այն որ կը թրթուայ, թունդ կ'ենէ. այլ սակայն հրեշտակ մը զայն գգուելու տեղ՝ սասանայ մը կը խայթէ զայն". Բ. Երես 196–197: Բնագիրն. c'est toujours la même fibre qui vibre; mais au lieu d'un ange qui la caresse, c'est un démon qui la pince.—Fibre կը նշանակէ Նեարդ, և փոխաբերաբար՝ լարաւոր նուադարանի աղի, որ նյոնպէս Նեարդ կ'ըսուի ի հայումն (և ոչ հարաբէւ). pincer հոս Մասներով թրթուեցնել կը թարգմանուի կամ կտել, և ոչ թէ իսպէւ:

19. "Երբ գմբաղդ աղջիկն անոր խոշոր ձեռքերուն իր թեկրը ճմկող չուանը քակելը զգաց, այն տեսակ մը ցընցումն ունեցաւ որ խաւարչուտ գիշեր ժամանակ ցամաքը հասնող նաւի մը մէջ գտնուողներն ընդուստ կ'արթընցնէ". Բ. Երես 22: Բնագիրն. elle éprouva cette espèce de secousse qui réveille en sursaut les passagers d'un navire qui touche au milieu d'une nuit obscure.—un navire qui touche կը նշանակէ խարակի կամ ժայռի զարնուող նաւ,

և ոչ թէ յահանգ հասնող նաւ ։ վաշ վաշ, ի՞նչ երեելի գաղ-  
դիադէտ :

20. “Ֆէպիւս այս միջոցին թուրովն ուժզին հարուած  
մը իշխուց անոր”. Գ. երես 39: Բնադիրն . Phébus lui  
asséna un vigoureux coup de botte dans la poitrine, *այ-  
սինքն “ֆիբոս կօշկի սաստիկ հարուած մը տուաւ անոր  
կրծոց”:* Botte (և ոչ թէ Coup de botte, եթէ չեմ սիսա-  
լիր) սրոյ հարուած կը նշանակէ ի սրախաղութեան . իսկ  
հասուածիս մէջ կոչ կամ հարուած կը թարդ-  
մանուի : Փիբոս ձի հեծած է, և կօշկաւը կը դարնէ քա-  
զիմոդոյի կուրծքը :

21. “Գողերու, գողօն կամ պիտակ աղջիկներու և տը-  
ղեկներու մըջիւննոց”. Գ. երես 67: Բնադիրն . fourmilière  
de voleurs, de filles et d'enfants volés ou bâtards, *այսինքն  
“Մըջիւննոց կամ բաղմակոյտ գողերու, բողերու, և գո-  
զոնի կամ անհարազատ աղջոց”:* Fille հոս բու կը նշա-  
նակէ . volés ou bâtards բառերն կը յարաբերեն միայն  
զենքն .

22. “Պէտք ես հարցընելիքս դիմանալ”. Գ. երես 121-122:  
Հիւկոյի գրածն այս չէ . vous devez savoir cela կը թարդ-  
մանուի “Պէտք է գիտնաս այս բանը”:

23. “Այնպէս որ՝ ինչպէս Յոյնն ունեցած ջրի աղբիւր-  
ներուն չափ ինքինքն Սաստուած կը կարծէր, իսկ Պարսի-  
կը՝ տեսած աստղերուն չափ”. Գ. երես 122: Բնադիրն .  
de façon que, comme le Grec se croyait autant de dieux  
qu'il avait de fontaines et le Persan autant qu'il voyait  
d'étoiles . — Հաստուածիս մէջ ոչ է ինդիր սեռի (com-  
plément direct), բնութիւն, այլ ինդիր բնութեան (complément  
indirect), բնութան համար ։ թարդմանելի էր . “Այնպէս որ՝ ինչ-  
պէս Յոյնն ունեցած ամէն մէկ աղբիւրը մէյմէկ աստուած  
կը համարէր, և Պարսիկն՝ տեսած ամէն մէկ աստղը մէյ-  
մէկ աստուած”. կամ “Այնպէս որ՝ ինչպէս Յոյնն որչափ  
աղբիւր ունէր նոյնչափ աստուած կը համիէր, և Պարսիկն  
որչափ աստղ կը տեսնէր՝ նոյնչափ աստուած”:

24. “Արեւ նոր ծագած ըլլալով՝ Մկանց-Ծակին մէջ  
մութը կը տիրէր տակաւին”. Գ. երես 174: Բնադիրն . le

jour, qui ne faisait que de poindre, laissait encore beau-  
coup de ténèbres dans le Trou-aux-Rats. այսինքն “Հաղիւ-  
լուսցած էր, և Մկանց-Ծակին խոր խաւարաւ պատած էր  
տակաւին” . Տ. Եռապարեան poindre բային նշանակութիւնը  
չգիտնալով՝ ահագին հակասութեան մէջ ինկած է . վասն զի  
183 երեսը կը դրէ . “Նոյն միջոցին՝ թէ և արեւ դեռ հո-  
րիզոնին վերայ չերեւար”. — յերես 188 . “Արեւ կը ծագէր  
այս կէտիս”. — յերես 196 . “Արեւ ծագեցաւ այս կէտիս”:

Բ. Գաղաքէրէն բառերու այլ ընդ այլ էմպատած . — 1. “Ժողո-  
վորդը արդարութեան պալատին ծառուղներուն մէջ խրո-  
նած էր”. Ա. երես 11: Բնադիրն avenue բառն կրկին  
նշանակութիւն ունի . նախ՝ ճանապարհ, արահետ . երկ-  
րորդ՝ ծառուղի : Հոս արհետ է և ոչ ծառուղի :

2. “Ոչ ես հարկ պիտի ունենայի յար և նաև նկարագրու-  
թիւն մընելու, և ոչ ալ ընթերցողը նոյն նկարագրու-  
թիւնը կարդալու”. Ա. երես 14: Բնադիրն . nous serions  
ainsi dispensés tous deux, moi d'en faire, lui (le lecteur)  
d'en lire une description telle quelle. թարդմանելի է ըստ  
իս . “Այս կերպով երկուքս ալ կ'աղատէինք, ես անշահ  
նկարագրութիւն մընելէ, ընթերցողն՝ զայն կարդալէ” .  
Tel quel երկու նշանակութիւն ունի . առաջինն և յաճախ  
գործածուածն է aussi mauvais et même plus mauvais que  
bon, de peu de valeur. Երկրորդն sans changement, dans  
le même état. Հիւկոյ նոյն մոքով գործածած է tel quel  
Ետք-Ճամփարիշ հաստուածի մը մէջ . “Cette foule, à laquelle  
les quatre sergents qui s'étaient postés dès neuf heures du  
matin aux quatre coins du pilori avaient fait espérer une  
exécution telle quelle” (“պատժական սանկ նանկ հանդէս  
մը”, Բ. երես 53). — “Le silence s'était bien en effet ré-  
tabli tellement quellement dans l'auditoire” (“հանդիսա-  
կանաց մէջ լուսթիւնը սանկ նանկ հաստատուած էր կը կը-  
կին”, Ա. երես 54): իսկ երբ ըստի յար մատեանը կը վերա-  
դարձունեմ ձեզ յար և նաև կամ լաւ ևս “Ձեր մատեանը կը վերադարձունեմ ձեզ ողջ ամբողջ, մաքուր , (այնպէս  
ինչպէս էր երբ ինձի փոխ տուիք զայն)”:

3. “Այլաշտի հատուածներն , որոնք ամեն վայրկեան իր առագաստի տաղին ամեն մասերէն դուրս կը ցատքէին”. Ա. Երես 40: Բնագիրն . incommensurables tirades. —Incommensurable կրկին նշանակութիւն ունի . նախ՝ ըստ թուաբանից և ըստ երկրաչափից՝ կը նշանակէ Անհամաչափ , այլաչափ . երկրորդ՝ Անչափելի (qui ne peut être mesuré, qui est très grand ou infini) : Հոս երկրորդ նշանակութեամբն իմանալու է : Նյոնակս Գ. հատորոյն 12 Երեսը . “Անլուր , վիթխարի , անհամաչափ բան մը”. բնագիրն , quelque chose d'inouï, de gigantesque, d'incommensurable, հոս ևս Անչափելի թարդմանելու էր : “Incommensurable océan”, Անչափելի կամ ահագին ովկիանոս , զրած է տեղ մը Լամարդին :

4. “Աւելի հեռուն , դրացուհիք , պատուհաննուն առջեւ կայնած , ձեռքերնին ճրագներ բռնած , զոր մէզը կը կարծէր , իրարու հետ կը խօսէին”. Ա. Երես 90: Բնագիրն . Plus loin, c'étaient des voisines à leur fenêtre avec des chandelles que le brouillard faisait grésiller. — Grésiller երկու նշանակութիւն ունի . Երբ անդիմօրէն կամ չէզո՞քաբար կը գործածուի՝ ըսել է Տեղալ մանր կարկափ . Il a grésillé toute la journée. Օրն ի բուն մանր կարկուտ կամ սիկիկ տեղաց : Խակ երբ ներդործաբար կը գործածուի՝ կը նշանակէ գալարել (ըստ Տ. Նուպարեանի կարկամել). Le feu grésille le parchemin, ըսել է կրակն զմագաղթը կը գալարէ : Վերօյգրեալ հատուածին մէջ չէզո՞քաբար գործածուած ըլլալուն համար է որ չիւկոյ ֆարմացիա գրած է . վասն զի ներդործական նշանակութեանն մէջ չըսուիր Le feu fait grésiller le parchemin, այլ . Le feu grésille le parchemin. faire grésiller կը նշանակէ ուրբեմն Ճարճատեցունել (ինչպէս որ կը ճարճատի մանր կարկուտն երբ կը տեղայ) և ոչ թէ կարկամել : Յուլիս Ժանին (Jules Janin) գրած է տեղ մը . “On sent grésiller et flamber la flamme”, այսինքն Բոցն կը ճարճատի և կը ցուլանայ :

5. “Ուղիսի ջրոյն ամեն մէկ հիւղէն կրէնկուարի Երեւանաց մէջ ճառագայթող ջերմածինի ամեն մէկ հիւղէները կ'առ

նուր իրմէ”. Ա. Երես 93: — “Երեւանացը ջախջախուած և գանկը պարպուած մեռած մարմին էր”. Գ. Երես 101: — “Ուստի ձեր Երեւանաց վրայ սպեզանի պիտի դնենք”. Գ. Երես 131: Բնագրին reins բառն երեք հատուածներուս մէջ ալ Երիկամունք չի նշանակեր , այլ Քամակ , մէջք , ողն , կող , կուշտ : “Երիկամունքը ջախջախուած” գրելու տեղ պէտք էր գրել “Միջաբեկ” կամ “Ողնաբեկ”: — “Երիկամունքը չուանով մը գօտեսորեց”, գաղղիաբանութիւն է ըստ Հ. Ո. Բանի Այրանեան (Քեր. արդի Հայերէն լեզուի , Երես 334). Հայերէնն է “Մէջքը չուան փաթթեց”:

6. “Իր վերջին խորանն և իր ամենաթանձրացեալ ձևն՝ որ պապան էր և որ նոյնպէս ճարտարապետութիւն էր”. Ա. Երես 194: Բնագրին arche բառն կը նշանակէ թէ՛ նոյն տապանն և թէ Տապանակ ուխտի կամ կտակարանաց . Հոս Տապանակ է և ոչ Տապան : Նախնիք ըսած են նաև Նոյի տապանակ , բայց ոչ Տապան ուխտի կամ կտակարանաց :

7. “Նոյն խակ խեղճ բանաստեղծութիւնն անգամ , որ ձեռագիրներու մէջ կը բուռնէր կ'անէր հեստութեամբ”. Ա. Երես 199: Բնագիրն . il n'y avait pas jusqu'à la pauvre poésie proprement dite, celle qui s'obstinait à végéter dans les manuscrits . — Երբ որ խօսքն տնկոց վրայ է , Végéter կը նշանակէ Անառնել և անել . բայց Երբ փոխաբերութեամբ կը գործածուի՝ ըսել է խեղճ ողորմելի ասպրիլ : Հոս փոխաբերական նշանակութեամբ գործածուած է , և բուռնէր չի թարդմանուիր :

8. “Տպարանի գիւտը պատութեան մեծագոյն դէպքն է”. Ա. Երես 202: Գաղղիերէն Imprimerie բառն թէ՛ Տպարան կը նշանակէ և թէ Տպագրութիւն . Հոս Տպագրութիւն է : Տ. Նուպարեան Մերէրայի Գ. հատորոյն (1884) 80 Երեսն ալ կը գրէ . “Ֆառութ բարբանի հնարիչ եղաւ ամենէ յառաջ”. Կարդա բարբանինեան : Այս . կութէնպէրկ գտած է ապագրութեան արուեստը , Ք. կոլոմբոս զԱմերիկա , բայց կարծէ բանակ յայտնի է որ Տ. Նուպարեան չէ :

9. Galette թարգմանուած է Պաքսամատ , Բ. Երես 25: Այս բառս կը նշանակէ Պաքսամատ (նաւալվարաց համար).

բայց կը նշանակէ նաև տեսակ մը կարկանդակ (gâteau)։ հոս կարկանդակ իմանալու է, ինչպէս արդէն կը կոչէ զայն չիւկոյ, ցաղանք 44, 45, 49, 50, (բարելին, +աւագ, բառ Տ. Նուպարեանի թարգմանութեան)։ Փոքրիկ եւստաքիսոփ ցանկութիւնը կարկանդակ մը կընար գրդուել, բայց ոչ կարծր պահանջան։

10. “Ահա աղջկան մը համար ահարիւ անուն մը”։ Բ. Երես 84։ Բնագիրն. voilà un terrible nom pour une demoiselle. — terrible հոս կը նշանակէ étrange, extraordinaire, նորօրինակ, տարօրինակ, զարմանալի, և ոչ Ահարիւ։ Voilà une terrible aventure բաել է Ահաւասիկ տարօրինակ դէսլք մը։ Terrible կ'ըսուի նաև անձանց համար, և կը նշանակէ Ոզորմելի, փցուն, գձուձ. օրինակ իմն, C'est un terrible faiseur de vers, C'est un terrible harangueur. Երբ Հիւկոյ կարդայ սոյն քննադատութեանս գաղղիերէն թարգմանութիւնը, զոր միտք ունիմ իրեն յղելու, անշուշտ ամենայն իրաւամբք պիտի բացադանչէ։ “Quel terrible traducteur que ce Noubarian!”

11. “Խեղճ քսակ, ի՞նչպէս թոյլ, թափուր և փոթք փոթք ես եղեր։ այդ վիճակիդ մէջ՝ ճիշդ ընդզայի մը այն կը նմանիս, հէքդ”։ Բ. Երես 101։ Բնագիրն. pauvre bourse! comme te voilà vide, ridée et flasque! tu ressembles à la gorge d'une furie! — Երբ որ Gorge բառն կանանց վրայ է, կը նշանակէ Ստինք կամ ծիծ, և ոչ թէ վրւ. հետեւաբար թարգմանելի էր։ “Խեղճ քսակ, ի՞նչպէս դատարկացեր, խորշումեր և թուլցեր ես։ կատաղւոյ մը ստեանց կը նմանիս”։ Նոյնպէս յերես 152, “իր փափուկ վռն անոր չուխայէ բաճկոնակին և կարծր ասզնեկիտութեանց կը քըսուէր”, կարդա “իր փափուկ ծոցն, լանջքն, սախնքն” (sa gorge délicate)։

12. “Կերպերոս Գուրէ կարկանդակը չխածաւ”։ Բ. Երես 113։ Բնագիրն. Cerbère ne mordit pas au gâteau de miel. — Gâteau առանձին՝ կը նշանակէ կարկանդակ։ Իսկ Gâteau de miel է Ծաղ կամ խորիս մեղու (la gaufre où les mouches d'une ruche font leur miel et leur cire)։

13. “Ճառտամբ եղայ և քեզի պէս թափառական”։ Բ. Ե-

Երես 189։ Բնագիրն. je devins vague et errant comme toi. — Vague չի նշանակեր հոս ապրաւում, այլ յածող, շրջող, թափառական։ Թարգմանելի էր։ “Իբրև զքեղ երերեալ և տատանեալ եղայ”։

14. “Իր տանիքին եղրէն՝ բիւրաւոր հրակառաներու գլուխներ կը աեսնէր”։ Գ. Երես 24. — “Վարդագոյն աղուոր կարմիւթիւն մը հրակառաները պայծառ կերպով մը կը զուարթացնէր”։ անդ, Երես 183. — “Զանդակատան բուրգ, հրակառան, քիւ”։ անդ, Երես 197։ Այս Երեք հատուածներուս մէջ ալ բնագրին Cheminée բառն Ծխահանք կամ Ծխան կը նշանակէ և ոչ թէ հրակառան (լաւ ևս վարաւում)։ Տ. Նուպարեան անշուշտ Le vent abattit plusieurs cheminées հատուածն կը թարգմանէ “Բամին Քէ շաբ կրականներ տապալեց”։

15. “Ճանջանքներու, ցնցումներու, երկարութանքներու, կենաց վերսակին սկսուիլ ըսել էր”։ Գ. Երես 43։ Բնագիրն. C'étaient les tortures qui recommençaient, les secousses, les alternatives, la vie. — Alternative Երկու բան կը նշանակէ։ նախ՝ Ընտրութիւն ի մէջ Երկուց իրաց, կամ Երկակողմանի Ընտրութիւն։ Երկրորդ՝ Յաջորդութիւն, դարձագարձ. օրինակ իմն, La vie est une alternative de peine et de plaisir. Կեանիքն վշտաց և հաճոյից դարձագարձ մ'է։ Հատուածիս մէջ Երկրորդ նշանակութեամբն կը հասկընամ ես զAlternative.

Գ. Գորդիւէն բարերու համապատասխանու հայերէն բարեւ։ — 1. “Հետեւեալ օրը թաղին հրձաւուրները մեծ հանդէսով վերուցին զայն”։ Ա. Երես 96։ Բնագիրն. le clergé du quartier, թաղին եկեղեցականքն կամ կղերականքն։ Ոչ ամենայն եկեղեցական է կրօնաւոր (religieux)։

2. “Լզմերաւալայի շաբէն”։ Ա. Երես 122. — “Ալիրուն աշտէն եկածին պէս աներեւոյթ եղաւ”։ անդ, Երես 123։ Բնագրին poignard բառն Դաշոյն կը նշանակէ։ Իսկ Աշտէ է նիզակ կամ տէգ։

3. “Մառաններու լուսանցոյց երդերէ գուրս ելնելով”։ Ա. Երես 100։ Բնագիրն. sortant des soupiraux des caves, այսինքն գետնատանց կամ ներքնատանց շնչահաններէն

դուրս ենելով է երդ է թուրքերէն պահա . իսկ Soupirail կը նշանակէ ouverture pratiquée à la partie inférieure d'un édifice, pour donner de l'air, pour donner du jour à une cave ou à quelque autre lieu souterrain. 8. Նուպարեանի համար գլուխն՝ ոտք է , և ոտքն՝ զլուխ :

4. “Եքէա եղայ , բայց բաւական չերմեռանդ չէի”. Ա. երես 129 : Բնադիրն . je me suis fait moine, այսինքն կրօնաւոր եղայ : Արբայ է Abbé, կրօնաւորներու առաջնորդ , վերակացու :

5. “Մարդկային ազգն երկու հրետակ ունեցած է ”. Ա. երես 210 : Բնադիրն կ'ըսէ տեստամենտ, կտակ . իսկ Հրետակ է Legs. Ըստ Տ. Նուպարեանի L'Ancien Testament է Հին Հրետակ , և Le Nouveau Testament Նոր Հրետակ :

6. Cul-de-lampe թարգմանուած է Եկեղեցական ղամբար , Բ. երես 44 : Բայց գաղղիերէն բառն կը նշանակէ Զարդ ինչ ճարտարապետութեան ի ձև յատակաց կանթեղի եկեղեցւոյ , որու համար ես հնարած եմ կանթեղատակք բառը : Հայերէն Ղամբար Flambeau է քանիթէ Lampe.

7. Dire բազում ուրեք Խօսէլ թարգմանեալ է . դոր օրինակ , “Երիկս Խօսէցաւ ինձ որ . . .” Բ. երես 29 . — “Արնամ Հայր Քը ամբողջ Խօսէլ”. անդ , երես 96 , և 146 , 149 , 152 , 183 , և այլն : Dire է Ըսել , Parler է Խօսիլ :

Ցես և հետեւեալները . Agneau , Ոչխար , Բ. երես 44 (փոխանակ Գառնուկ) . — Clou , Սեպ , Բ. երես 109 (փոխանակ Բևեռ , Գամ . Սեպ է Coin) . — Prostitution , Շնութիւն , Բ. երես 173 (փոխանակ Պոռնկութիւն , Բողութիւն . Շնութիւն է Adultère) . — Corridor , Բակ , Գ. երես 112 (փոխանակ Փող . Բակ է Cour) . — Sanglot , Հառաշանք , Գ. 192 , 201 (փոխանակ Հեկեկանք . Հառաշանք է Soupir) , և այլն , և այլն : Գաղղիացիք կ'ըսեն . Il ne faut pas confondre autour avec alentour . Բայց Նոր-Տամի թարգմանչին համար Autour և Alentour տարբերութիւն չունին :

Այս ամէն դիտողութիւններէս ետքը պատշաճ կը համարիմ ընդօրինակել Տ. Նուպարեանի Յայտարարութեան հետեւեալ հատուածը . ո՞և է խորհրդածութիւն աւելրդ-

է . “Իսկ Գրանսերէնի նրբութիւններու գալով՝ մեր բառարանն անհուն և անհիտելի առասելունիւն մը կ'ընծայէ Պ . Նորայրի մեծ գործին վրայ” : Եւ դարձեալ . “Բառարանիս ձեռնարկելէ առաջ , որու չէ թէ մեր փանաքի կարողութիւնը՝ այլ անհուն եռանդը քաջալեր եղաւ , խորունկ համոզում մ'ունէինք թէ՝ որ և է երկլեզուեայ բառդիրք յօրինելու համար՝ հարկ է որ հեղինակը բազմաթիւ թարգմանութիւններով այդ կրկին լեզուաց ողին և զանոնք իշրաբմէ բաժնող տարբերութիւնները նախապէս ճանչցածու լաւ մը հասկցցած լինի : Այս համոզումն մեր աշխատութեան ընթացքին մէջ հետզետէ աւելցաւ ու անդըրդուելի հաստատութիւն մը գտաւ : Առանց թարգմանութեան՝ որ ըսել է առանց փորձառութեան՝ բառարանի հեղինակ մը՝ որչափ և հմուտ լինի չկրնար դիտնալ այն ամեն բառերն՝ ասմունքներն՝ ածականի ու գոյականի լծորդութիւններն , և ըստ ինքեան աննշան ու ամենապարզ երնցող խօսքի ձևերն՝ որք նորավարժներու շուարումը ու երբեմն հմուտներու իսկ գժուարութիւն կ'ընծայեն՝ իրենց աշխատութեան մէջ կասեցներով զանոնք : Բառարանիս հեղինակը՝ իր թարգմանական փորձառութենէ օգտուելով՝ այդ գժուարութիւններն գէթ մեծագոյն մասամբ հարթած ու դարմանած՝ ու հայտ հորժական երկ մը յօրինած լինելու խորունկ համոզումն ունի” : Այս խօսքերով Տ. Նուպարեան ըսել կ'ուզէ . “Նորայր , որչափ և հմուտ ըլլայ , ինծի չափ գաղղիերէն չգիտեր , ինծի պէս լս՝ ճը համալցած չէ գաղղիերէնի ողին , վասն զի ես Խոր-Տամի և այլ բազում ինչ թարգմանած եմ , մինչդեռ Նորայր ոչինչ թարգմանած է” : Իրաւոնք ունիս , ո՞ւ պահծալի Նուպարեան . քու չքնաղ գաղղիացիտութեանդ փառաւոր վկայական մի կը խոստանամ ի կողմանէ Վիկառը Հիւկոյի :

Դ. Անադին անմոռադրունիւն : — 1. “Երկու բազուկներդ և Երկու յեւ+Երդ հովին բացուած աղօրիի չորս թեւերու կերպարանք ունին” : Ա. երես 18 : Բնադիրն . “Երկու բազուկներդ և Երկու յոււնաԵրդ” (vos deux jambes) :

2. “Մեր վիլիսովիան անշին մնաց” : Ա. երես 122 : Բնա-

դիրն . notre philosophe resta interdit. այսինքն “Մեր կիւլիսովիայն չերնեցաւ” (կամ ապշեցաւ) մնաց” : Արշափի իրաւամբք բաած է տիկինն Սեւինեկ թէ թարգմանիչն նման է այն ծառային որ իւր տիրոջ հրամանին բոլորովին հակառակը կը կատարէ :

3. “Տիկին Ալոիխ ար կօնտլօրիէ և իր չքնաղ Շուր Ֆլէօր-ար-Լիս” . Ա. Երես 146: Բնադիրն կ’ըսէ փետի, Դասղիկ . Տ. Նուպարեան կարգացած է Պետի-փետի, թուր , առանց միտ դնելու որ Բ հատորոյն 67 Երեսը Շուշանիկ (Fleur-de-Lys) օրիորդն՝ նոյն տիկին Ալոյիսեայ աղջին կ’ըսուի : Գծիկն , ինչպէս ստորակէտն , նշանախեց մի է , բայց որ-չափ մեծ է իւր կարեւորութիւնն :

4. Carton բառն Խաղաւարտ թարգմանեալ է , Ա. Երես 27, 59, 65 . բայց որովհետեւ Carte Խաւաքարտ կը թարգ-մանուի , Գ. Երես 200 , անշուշ Խաղաւարտ էր անուն է Վիլիսակ Խաւաքարտ : — Ճարտար թարգմանիչ մը Մուտար բառին համար “Անանուխի աման” գրած էր տեղ մը , կարծելով որ Մանանիխ և Անանուխ մի և նոյն բանն է :

Արդեօք անմասագրութեա՞ն հետևանք կամ տպագրու-թեա՞ն սիսալ է Գ հատորոյն 49 Երեսը Շատրւածւ զլուածն փոխանակ Խաղակիւլ:

5. Géant à mille têtes et à mille bras թարգմանեալ է “Հարիւր-գլիսեան և հարիւր-աջեան (!!!) հսկայ” . Ա. Ե-րես 194 . նոյնպէս Monstre à mille pieds “Հարիւրոսնեայ հսկայ” . Ա. Երես 209 , փոխանակ “Հաղարագլխի և հա-զարձեռանի հսկայ” , “Հաղարոտանի ճիւաղ” :

6. “Վենենետիկ սոսկալի բանտերուն մէջի բանտականե-րուն նման , որը խիստ խոնարհ և խիստ կարճ կայտեայ “ըն-տուի մը մէջ՝ Երկուքի ծալլուած կը ծերանային” . Ա. Երես 158: Բնադիրն կ’ըսէ “բարեայ տապանի մէջ” (dans une boîte de pierre) :

7. “Ոնոր եաւէն Երթալէ դարձնէ էր” . Բ. Երես 136: Բնադիրն . դարձնէ չէր (qui n'avait cessé de le suivre) :

8. Soupir բառն sourire կարգացուած և ժուր թարգ-մանեալ է , Բ. Երես 145 , փոխանակ հաստալուն+ : — Reprendre (վերստին կախել) reprendre կարգացուած է , Գ. Երես

149 . “Կ’ուղեն ասկէ Քրցնել առանք զքեղ” , կարդա “Քրուրէն կապէն զքեղ” : — Ou (համ) կարդացուած է օù (ուր) . “Հիմա է ճիշդ ապրելու կէտը՝ ուր Ալամազդ ցոփ և շա-ղացյա մէկը կը դառնայ” . Բնադիրն . c'est le cas de vivre , où Jupiter n'est qu'un poisson . Տ. Նուպարեանի արծուա-քիթ ըլլան կամ ըլլան անծանօթ է ինձ . բայց յայտնի է որ արծուատես չէ :

9. “Ազատէ զիս , խնայէ զիս” . Բ. Երես 194: Բնադիրն . sauve-toi , épargne-moi , այսինքն “Ապրեցուր անձդ , խնայէ յիս” :

10. “Ճամկէհինդ տարի սունեցան , կեղեքուե-ցան քեղ ազօթելով , Աստուած իմ” . Բ. Երես 198: Բնա-դիրն . ծունկեր (mes genoux) :

11. “Ո՛վ ըլլալը մի՛ հարցներ ինձ” . Գ. Երես 38: Բնա-դիրն . Ne me demandez-vous pas qui ? Զէ՞ք հարցըներ թէ ո՛վ է :

12. “Ի՞նչ բառ այդ գնչու աղջիկը” . Գ. Երես 56: Բնա-դիրն . qu'en avez-vous fait ? Ի՞նչ բեր :

13. “Մեր փիլիսոփային դոյնն այս միջոցիս բոլորովին հաղորդ դարձաւ” . Գ. Երես 126: Բնադիրն . Notre philo-losophe était en ce moment plus vert qu'une olive . այսինքն “Մեր փիլիսոփային Երեսաց գոյնն այս միջոցիս ձիւթապաղէ մ'աւելի կանուն էր” :

Անմտագրութեան հետևանք կը համարիմ նաև տեղ մը բնադիրն 21 տողը մոռնալ անցնելը (Բ. Երես 208) , ուրիշ տեղ 27 տող մոռնալը (Գ. Երես 182—183) , որով պատ-մութեան կարգը կը չփոթի : Խակ Ա. հատորոյն մէջ 182—183 , 186—187 , 190—191 Երեսներուն ետևառաջութիւնը չի կրնար բնաւ արդարանալ : Հիւկոյի Նօր՝ Տաշն ամէն կերպով անարդուած է ի Նուպարեան թարգմանութեան :

Ե. Յառաւուն անուանց “իւլ կարդացնաւ” . — Գաղղիերէն շատ մը յատուկ անուանց մէջ Տ դիրն բոլորովին անձայն է . ուստի հետևալ ամէն անուանք առանց էի պիտի կար-գացուին . Միւսնիէ , լէսպրիվէն , բասքիէ , իսքօրչըրի . Saint-Genest կը կարգացուի Ալեն-Ժընէ (և ոչ Ալեն-Ժընէսդ) . la tour de Nesle , Նէլի (և ոչ Նեսլի) աշտարակ . Vesle ,

վէլ գետ (և ոչ թէ վէդ)։ Saint-Germain-en-Lay կը կարդացուի Սէն-Ժէրմէն-ան-լէ (և ոչ լայ)։ Saint-Germain-l'Auxerrois կը կարդացուի Սէն-Ժէրմէն-Լ'Օսէռուա (և ոչ Օքսերուա)։ Quasimodo, Քազիմօտո (և ոչ Քուազիմօտո)։ Gratien կը կարդացուի Կուասիէն (հայերէն Գրատիանոս) և ոչ կրագիան (Ա. 150, Բ. 145), կրագիէն (Բ. 147), և այն, և այն։

Դիցաբանական և պատմական անուանց հայերէնքն բուրովին անձանօթ են Նոր-Տամ-Տամանչին։ Տես Միներվ (Ա. 205), փոխանակ Աթենաս։ — Ժամալիկ (Ա. 181), փոխանակ Յամբլիկոս կամ Յամբիքոս։ — Հերքիւլէս (Գ. 127), փոխանակ Հերակլէս։ — Հերքիւլէսեան (Բ. 91)։ — Տիան (Գ. 131), փոխանակ Արտեմիս կամ Մինահիտ։ — Մարսիալ (Ա. 113), փոխանակ Մարտիալ, Մարտիլէս։ — Էշիլ (Ա. 199, Բ. 116), փոխանակ Եսքիլէս։ — Ետրուսքեան (Ա. 192, 199), փոխանակ Ետրուրական, և այն, և այն։

Գ. Հայերէն լուս-է անդեպունիւն։ — Այս մասիս շատ քիչ բան պիտի ըսեմ, վասն զի Տ. Նուպարեանի թարգմանութիւնը հայ լեզուի օրինօք մանր քննելը՝ անշահ և աւելորդ ժամավաճառութիւն կը համարիմ։ Նոր-Տամ-Տամաներն գրեթէ ամէն տողի մէջ կը հայնայեն կը թշնամանեն հայ բարբառոյն քերականութիւնը, բառդիրը, ուղղագրութիւնը։ Իմ դիտաւորութենէս հեռի է մի բառ միուշէ նշանակել հոս Տ. Նուպարեանի բոլոր տաճկաբանութիւնքը, դազդիաբանութիւնքը, ուամկաբանութիւնքը, անարուեստ և անքերական դարձուածները, տափակութիւնները, խորթութիւնները, մխաները։ Երբ որ հրատարակուի Ջրանսերէն-Հայ աշխարհիկ գերազանց բառարանն, այն ժամանակ առ իւնենամ զրիչը վերստին ձեռք առնելու։ Ու այժմ փոքրիկ ճաշակ մը կ'ուզեմ ընծայել Տ. Նուպարեանի հայկաբանութեան, համառօտիս յիշատակելով իւր քանի մի նորութիւնները, քանի մի հայերէն բառերն, և քանի մի ուղղագրութեան ձեռնեն։

Ա. Քանի մէ նորութիւն։ — 1. «Երկու ուսերուն մէջ տեղահագին սապատ մը, որու անդրադարձ արձագանքն առնելի կողմէն կ'երևէր»։ Ա. Երես 63։ Ճ. դարս արդարե-

զարմանալեաց դար է։ ահաւասիկ արձագանդն որ մինչև ցայժմ է լուսուր, սկսած է նաև երևան։ Տ. Նուպարեան տեսած է զայն։ Քանի շնորհակալ կ'ըլլայի Տ. Նուպարեանի եթէ յաջողէր բռնել արձագանդ մը և ինձի զրկել որպէս զի ես ալ տեսնէի։ Ճանապարհի ծախքը սիրով կը հասուցանեմ։

2. «Ժողովարանի աւագանիներէն մէկուն դրան առջեւ»։ Ա. Երես 69։ Առաջանի դրուած է հոս իր եզակի Առաջ։ բայց Առաջանի, ինչպէս և Առաջուրեար, յոզնակի կը ցուցնեն։ Ուրեմն «փողոցը հարդ ճը տեսայ» ըսելու տեղ՝ նցն է եթէ ըստուի «փողոցը հարդի ճը կամ իրեար ճը տեսայ»։ — «կինս այսօր հանկարի ճը ծնաւ»։ — «կարճ նահականի ճը ընդունեցայ բարեկամէս»։

3. Պալատէն կը էլ շուռած ժամանակի»։ Ա. Երես 85։ Առանձեռն բառագրոց երրորդ տպագրութեան մէջ Միսիթարեան Հարք պէտք չէ մոռնան զայս ջուռակ։

4. Տնել Նուպարեան լեզուաւ կը նշանակէ ձբնէլ, s'Enforce. «կը ունէր իր միտքը ժողվել»։ Ա. Երես 403. տես և Գ. Երես 20, 46, 121։

5. Երէլար և Ջոր նոյնանշան են ըստ Տ. Նուպարեանի։ տես Բ. Երես 61։

6. Vous avez l'air du mouton d'or qui est au cou de monsieur de Bourgogne, Ժարդմանեալ է։ «Պուրկօնեի արքայազունին վզէն կախուած խաչնին կը նմանիս»։ Բ. Երես 171։ Բա՛րէ, բա՛րէ։ ամբողջ խաչն մը այսինքն ոչ խարներու հօտ մը մէկ մարդու վզէն կախուած։ Տես նաև «Խաչնի գուեհ», rue du Mouton, Գ. Երես 175, 177։

7. Աստուածածին, սեռական Աստուածածնայ է Նուպարեան քերականութեան մէջ, Ա. Երես 16, 132, 187, և այն։ թէպէտ և Հ. Այտքնեան կը դրէ թէ «Ուամկական հողով կը համարուի Աստուածածնայ փոխանակ Աստուածածնի»։ (Փ. Եր. արդի Հայերէն լեզուի, Երես 30)։ Կ'երեսի թէ Այտքնեան ևս ինձի նման միջինդարեան մ'է, և Նուպարեան հայկաբանին հետ պէտք է գրել Աստուածածնայ, նաև ի դրոց լեզու։ «Առաջի մեծի դրան մայր եկեղեցւոյն որբոյ Աստուածածնայ»։ Բ. Երես 175։ Ըստ այսմ Գինովունիւն աշխար-

հիկ բառն ալ բարձրացած է մինչեւ յաղնուականութիւն հին հայերէնի . “Անառակ ինչ է գինի , և խոռվալից ինչ գինովութիւն” . Գ. Երես 75 :

8. De plus fort en plus fort. Ո՞վ կ'ուզէ ուսանիլ Անանիմ չզոք բային ներդործական ձեն . թող գիմե՛ առ Տ. Նուպարեան . “Մեղ էնեցնուները շատ անդամ մեր լաւագոյն բարեկամները կ'ըլլան” . Գ. Երես 150 : Այս ինեցնէտ բայն միայն՝ արժանի է իզմիրեան մրցանակի 500 բարդիին : Բատ սյսմ կրնայ ըստուիլ երթամ , Երեցնէտ . “Այս առաւօտ սպասաւորս վաճառանոց էրեցուցէ , բայց ճամբառն ձիաւոր մը էնեցուցէր է զինք , և պատզարակով խեղճ մարդը տուն բերին” : — Դպչիլ բայն հետեւալ կերպով կը լծորդի . Դանաւ (Բ. Երես 168 , 222. Գ. 46) . մի՛ դպինը (Ա. 127. Բ. 150) . ուրացաւ (Բ. 96) . ուրացէ (Ա. 130) . ուրաց (Բ. 167) : — ինչպէս գերանուան հոլովումը . եղակի ինքնինքնին , ինքղինքնին , ինքղինքնին , ինքղինքնիդ . յոդնակի ինքղինքնին , ինքղինքնուն , ինքղինքնէն :

9. Ի թարգմանութիւնս ի գաղղիականէ յաճախ իդական բառի պէտք կը զգացուի : Տ. Նուպարեանի հետեւալ իգականներն կը յանձնարարեմ առ հասարակ թարգմանչաց . Ժտուհի (Ա. 30) , հետաքրքիր կին . — Քրծուհի (Բ. 30, 47, 200) , քրծազդեստ կին . — Փակելուհի (Բ. 47) , արգելական կին . — Կալանուհի (Բ. 172, 177, 181) , կալանաւոր կին . — Մանկուհի (Բ. 193) , աղջիկ . — Առիւծուհի (Բ. 198) , մատակ առիւծ . — Մեղուհի (Բ. 198, 241) , մեղաւոր կին . — Պակշուհի (Գ. 15) , պակշուտ կին . և այլն , և այլն :

Բ. Քանի ու հայերէն բառեր . — 1. Քահքահ . “ըսաւ մեծաձայն քահքահովը” . Ա. 65 . — “քահքահներու որոտում” . Ա. 19 , Բ. 83 . — “քահքահի շոխնդ” . Ա. 161 . Բ. 132 . — “սուր քահքահներ” . Ա. 102 , 106 , 116 . — “մեծ քահքահներ” . Գ. 14 . — “քահքահը ձգել” . Ա. 20 , 53 , 159 . Բ. 79 , 116 , 149 . Գ. 49 , 170 . Ես ալ որոշութիւն քահքահ մը կը ձգեմ , և կ'անցնիմ յաջորդներուն :

2. Refrain բառին հայերէն կը դրուի նաքարաթ , Ա. 189 . Բ. 60 , 131 , 135 , մինչեւ չ . Սրապիոն իմինեան

իբրև տաճիկ բառ կը նշանակէ նախարարն ի բառն Refrain .

3. Massepain բառին հայերէնն է Պաքլավա . “Սուրբ Յովհաննու տօնի պատլավներ” . Բ. 12 :

4. Moustache , հայերէն Պեխ . “Պեխերը ոլրել” , Բ. 72 , 143 . — Սպիտակապեխ (!!!) կաւատուհի ” , Բ. 134 . — Պեխսաւոր (!!!) կատու” . Բ. 141 :

5. Faire signe հայերէն կ'բառուի նշմայր ընել , Բ. 76 , 89 : Անշուշտ Նշմայր բառը քիչ մը խանգարելով տաճիկն ըստեղծած է զիւրն էշար էնքու :

6. Intrépide fatuite հայերէն կը թարգմանուի “Զէվչէն անվեհերութիւն” (Ընդէր ոչ “Անվեհեր չէվչէն-նէն-ն”) . Բ. 78 : Մարդ որչափ բան կ'ուսանի երբ կը կարդայ Նուպարեան նօր-ջամը :

7. Cul և Fond բառերն (Ընթերցողներէս ներումն կը ինդրեմ) հայերէն կ'ըսուին Տիպ . “Մհա կարեկցութիւն մ'որ այնչափ տեղն է որչափի փետուր մը խոզի մը տիպը” . Բ. 79 . — “Հնձանի տիպ տնեցող խոնարհ խոռոչ մը” . Բ. 178 . (Ընագիրն . un cul de basse fosse à fond de cuve) : Ուրեմն Վենոս Callipyge պիտի կոչենք վենուս գեղատիպ . այնպէս չէ՞ վարպետ նուպար : Ի՞նչպէս կը վայեն իրարու քով “խոզին տիպն” և “զիրուկ պուտերն” : Վահ , չիւկոյ . վահ , չոմեր :

8. Se mettre à genoux հայերէն կ'ըսուի ծոնկ չոքել , և կատարեալ եղակի երրորդ դէմք “ծոնկ չոքեց” . Գ. 48 : — Խելացի Խէկարն որ նոյնպէս “ծոնկ չոքել” կը դրէ , անշուշտ այս անդամ ևս վայրէն պիտի կոչէ զիս : Հեղնութիւնն զօրաւոր զէնք մ'է երբ հեղնողն կը խօսի յանուն զիտութեան . բայց Խէկարն զրածներն ցուրտ խեղկատակութիւնք են , և լեզուարանական խնդիրք ոչ կը քընուին և ոչ կը լուծուին խեղկատակութեամք : Խէկարն չի պահանջուիր որ “անտիպ ձեռագիրներ” կարդալու վասնէ խըր թանկագին ժամանակը . “տպեալ քերականութիւն” և “տպեալ բառազիրք” բաւական են իրեն , որպէս զիթէ ներգործական բայերուն խնդրառութիւնն ուսանի և թէ՛ բառից ուղղագրութիւնը :

Ցիշեմ և զչետագայուղ .

Bas-côtés. Եկեղեցւոյ ցած կուշտեր (Ա. 142) կամ խոնարհ կողեր (Գ. 17) :

Bouge. Աղխախուց (Բ. 141) :

Chiffonnier. Գրղւեաժողով (Բ. 90) :

Crayère. Գաճափոս (Բ. 37) : Տ. Նուպարեանի համար գաճ (Gypse կամ Պլատր) և կաւիճ (Craie) նոյնանշան են :

Creux de la main. Ջեռքի դող (Ա. 124) :

Déchirant. Աղեյօշ (Բ. 39, 51, և այլն). Արտայօշ (Բ. 48) :

Diacre en dalmatique. Սպասահանդերձ սարկաւագ (Բ. 215). — Sous-diacre. Փոխ-սարկաւագ (Գ. 71) :

Échelle. Ենարան (Ա. 17, և այլն) :

Épaule. À puissantes épaules. Մեծուս (Ա. 46), À larges épaules. Լայնուս (Բ. 150) : Մեր տղէտ նախնեաց լեզուաւ Անուս և Նորուս բոլորովին ուրիշ բան կը նշանակեն . իսկ լայն կամ մեծ ուս ունեցողին՝ նոյն տղէտ նախնիք ըսած են թիկնեղ, թիկնաւէտ, Լայնաթիկունք :

Inutilité. Անպէտքութիւն (Գ. 6) :

Manteau de cheminée. Կրակարանի ցցուամաս (Բ. 71) :

Moulin à eau և Moulin à vent հաւասարապէս ջաղացք է Տ. Նուպարեանի համար, մինչդեռ Ճի. գարու նախնիք ջրաղաց բառն հնարած են յատկապէս Moulin à eau ըսերու համար, իսկ արդիք ստեղծած են Հողմաղաց որ կը նշանակէ Moulin à vent. նախնեաց Աղօրի բառն թուի թէ անսասնոյ կամ մարդու միջոցաւ դարձած մեքենայն է : Ուր Հիւկոյ կը դրէ Աile de moulin, Տ. Նուպարեան կը թարգմանէ “Ջաղացքի թէ” (Գ. 9, 89), փոխանակ “Հողմաղացի թէ”. իսկ ուր կը դրէ Ռու դե մուլին, Տ. Նուպարեան կը թարգմանէ նոյնպէս “Ջաղացքի թէ” (Գ. 50), փոխանակ “Ջրաղացի անիւ” :

Ouragan. Արուական (Գ. 9, 144) : “Յուսահատութեան այս ուրուականս իր հոգւոյն մէջ ամեն բան արմա-

տուքի կը խլէր” . — “Ամէն կողմէ ուրուականի մը նման մոլեգին աղաղակներ լուսեցան” :

Pronostic. Նախ-ախտ-դատում (Բ. 202) :

Regarder fixement. Ակնայեռ նայիլ (Բ. 217, Գ. 77) :

Spectre solaire. Մութ-սենեկի-մը-պատին-վրայ-հատածածակմով-բեկրեկած-լուսոց-շառաւիղներ (Ա. 141) : Երկու բառի դիմաց ի՞նն բառ : Այսպիսի ճարտար թարգմանչի մը ֆրանսերէն-Հայ աշխարհիկ բառուանն էրապէս ու գործականապէս պիտի դիւրացնէ” զմարգմանութիւնս ի դաղղիականէ :

Գ. Քանչ Գ. Առաջնորդութեան յւեր . — 1. Տ. Նուպարեան միշտ կը դրէ “Արողին երթալ” (Ա. 24, 26, Բ. 135, Գ. 39, 73, 75) . “Արողը անիի” (Ա. 70, 99, Բ. 145) : Ստորին Հայերէնի մատենագրաց ուղղագրութիւնն է Գրու . “Ան քաղաքան որ դուն մըտնուս” էրբուին ձայնըն չի համնի” . Տաղսիրոյ . — “Թող բաժին լինի էրբուին” . անդ . — “Այս ասարնուրիս վերաց երկու բան ողորմ ու լալի, Մէկ որ սիրոյ տէր լինի, մէկ որ գայ էրբուն ու տանի” . անդ . — “Անդուր ւանըսպառ եկեալ անէրօն հոգիս կու տանի” . անդ : Ահաւասիկ Գրու բառին սառուգաբանութիւնն . “Հին Հայոց կարծիքով աստուածների հօր Արամազդի կողմից ուղարկուած մի անմարմին ոգի կար երկրիս վրայ, որի պարտաւորութիւնն էր մարդկերանց վրայ հսկել, և նրանց բարի ու չար գործքերը ինչո՞ւ էրէ մէջ էրէլ : Այս ոգին հասարակ անունով կոչվում էր Գրու . իսկ քուրմերը Արամազդէ անընդունակ էին անուանում նրան և հաւատացնում էին ժողովը ըմէ մարդկերանց մեռնելուց յետոյ, հոգիները առնում տանում է Արամազդի առաջին, որոնց դասաստանը ինչո՞ւ մէջ գրուածներին նայելով կատարվում է : . . . Այս ազգային աստծու ազգեցութիւնը մեծ էր Հայոց վրայ, երբեք երկիւղի և յուսոյ առարկայ միանդամայն . նրա աղջեցութեան հետքերը մինչեւ այժմ էլ լեզուի մէջ մնացին : Մէկին անիծելիս սովորական բան է ասելը . “Գրողը տանի քեզ, Գրողից սե խաբարդ-լսեմ”, (այսինքն մահուանդլուրը առնեմ) : Ստեփան Պալասանեան, Պտմ. Հայոց գրականութեան (Տփղիս, 1865), երես 138 : Տես և ծանօթութիւնս վերգելի Մշակականաց, Գ. տող 499 : Ուամիկն

կրո՞ւ կը հնչէ , ինչպէս նաև կրո՞ւ կարդացող , կը մո՞ւ յո՞ւշէ , ձ՞ո՞ւ , ծ՞ո՞ւն , և այլն , և այլն :

2. Նշանակութեան արժանի են նաև հետեւալ ուղղագրութիւններն . Հայել (շահ) , Ա. 164 . գ. 14 , 21 . Հայոց , Ա. 103 . Հային , Ա. 163 . — Տրձակ , գ. 8 , 13 , 34 , 89 , 159 . — Գեքերի , Ա. 95 . բ. 6 . — Գանդուռ , բ. 36 . գ. 69 . — Յափյափել (աղջիկ) , բ. 63 . և այլն , և այլն :

## ՎԵՐՋԱԲԱՆ

Ի՞նչ է այս երկայն Քննադատութեանս նպատակն : Ցույցընել թէ այսպիսի հրաշավի թարգմանչի մը բառարանն չի կրնար գերազանցել քան զիմս ի մասին Հայերէն լեզուի հարատութեան և գեղեցիկութեան և Գաղղիերէն լեզուի նրբութեանց , որչափ ալ պարծի , պոռոտայ և կարկաչէ Տ. Մեսրոպ Կուպարեան : Ահաւասիկ ի միջի կայ Նօրէ-Տաճ , գաղղիերէնի և հայերէնի մեծամեծ սխալներովն և այլանց գակութեամբք , յորոց ոչ զբնաւն յիշեցի : Այնու ոճով և զիտութեամբ որով թարգմանեալ է Նօրէ-Տաճ , գրեալ են նաև Մերերափ յօդուածներն և Թրանսերէն-Հայ աշխարհիկ բառարանի Յայտարարութիւնն : 1871 էն ի վեր Նօրէ-Տաճի թարգմանիչն վոքրիկ պարագաներ մ'անդամ կրո՞ւ չէ :

Տ. Կուպարեան նոր բառդիրք մը յօրիներ է Գաղղիերէնի ի Հայերէն . աղատ է մինչև յամպա զայն վերացընելու . բայց երբ շահասիրական գձուձ դիտմամբ իմ բառդիրքս “անպիտան” քարոզելով առանց ցուցմանց՝ կ'ուզէ “պիտանի” ընծայեցընել զիւրն , այն ատեն կը հասկրնայ թէ որպիսի անձի հակառակորդ կամ մրցակից ելած է ինք : Եմինեանի բառադրոց թերութեանց վրայ խօսիլս իւրաւոնք չէր տար Տ. Կուպարեանի որ ինք ևս իմ բառարանս թերի հոչակէ : Եթէ յետ տասնեռութ ամաց ես ևս հրատարակեմ բառարանիս երկրորդ տպագրութիւնը առանց ուղղելու և ոչ մին այն ամէն պակասութեանց զորս բազմագէտն Կուպարեան և ուրիշ “ձեռնհաս բանադատներ” նշանած են իմ գործոյս մէջ , այն ատեն որչափ և

մեղադրուիմ՝ դեռ քիչ է : Սակայն Բառարանս տակաւին չաւարտած , Բառարանիս ետեւի համառօտ Յաւելուածը տակաւին չտպուած , առանձինն հրատարակելի ընդարձակ Յաւելուածը տակաւին լցու չտեսած , փող և թմբուկ զարկ , Տ. Կուպարեան , թէ Նորայրի Բառդիրքն թերի է . տես թէ կը ներե՞մ քեզ զայդ չարութիւն : Իմ շիւղերս ցուցնել կ'ուզես Հայ հասարակութեան . բարի է . չեմ կրնար արգելու զքեզ . բայց նախ և առաջ հանէ քու աչացդ գերանները , եթէ չես ուզեր որ քաշքչեմ զքեզ հանդերձ գերաններովդ ի ծաղը և ի ծանակ բոլոր աշխարհի :

Յետա այսը Քննադատութեան՝ յուսալի և փափագելի է որ Տ. Կուպարեանի արգէն իսկ գանձած 228 սկւոյն գումարը բարձրանայ մինչև ի 500 . դյնչափ գրամմով կրնայ սկսիլ Ֆրանսերէն-Հայ աշխարհիկ բառարանին տպագրութիւնն , և այն ժամանակ վերատին կը խօսիմ և աւելի ճոխանալով՝ Տ. Կուպարեանի գաղղիադիտութեանն և հայագիտութեանն վրայ :

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻՒԶԱՆԴԱՑԻ

Մարգարետ, 13 Մայիս 1884



այսպիս պահու ունի պարզութ : Յ զա առ բ Պիտոյ բարձր  
ընկա ունեա առանձին վեճու ամենալավ և եւսպա ուն  
քանի ունի վեճու պարզութ : Ամենա ուն և եւսպա ուն ամենու  
պարզ և բայ և եւսպա ուն և ամենու և եւսպա ուն  
և պարզ պարզ պարզ պարզ : Այ ամենու ուն և պարզ  
պարզ և ամենու պարզ ուն և պարզ ուն պարզ ուն  
և պարզ և ամենու պարզ ուն և պարզ ուն պարզ ուն  
ուն և պարզ ուն և պարզ ուն և պարզ ուն պարզ ուն  
ուն և պարզ ուն և պարզ ուն և պարզ ուն պարզ ուն  
ուն և պարզ ուն և պարզ ուն և պարզ ուն պարզ ուն  
ուն և պարզ ուն և պարզ ուն և պարզ ուն պարզ ուն

և պարզ ուն և պարզ ուն և պարզ ուն պարզ ուն  
և պարզ ուն և պարզ ուն և պարզ ուն պարզ ուն : Ե պա  
րզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն  
պարզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն  
պարզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն  
պարզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն  
պարզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն  
պարզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն  
պարզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն  
պարզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն պարզ ուն

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՌԱՋԱԿԱՆ ՎԱՐԱՐԱ

1881 ՏԱՐԻ 61 ՀԱՅՐԱՐԱ



2698

6154

6155

6156

6157

Դաշտ

ՀՀ Ազգային գրադարան



NL1862210

ՀՀ Ազգային գրադարան



NL1862209

ՀՀ Ազգային գրադարան



NL1862208

ՀՀ Ազգային գրադարան



NL1862207

ՀՀ Ազգային գրադարան



NL1862206

ՀՀ Ազգային գրադարան



NL1862205

20

